



ՏՆՕՐԷՆ ԽՄԲԱԳԻՐ
ԵՒ
ՊԼՏԱՍԻԱՆԱՏՈՒ
ՆԻԿ. Մ. ԹԻՒՂԵՆՏՅԱՆ

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՊԵՐՐՈՒ 20ՓՐ ՄԷԹԱԼԻ ԲԱՆՈՒՄ

ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՈՒՆԿՐՈՒՄ

Կ. ՊՕԼՍՅ ՀԱՄԱՐ

Տարեկան	դր. 100
Վեցամսեայ	» 50
Եռամսեայ	» 25

ԳՐԱՆՈՒՍ ՀԱՄԱՐ

Տարեկան	դր. 150
Վեցամսեայ	» 75
Եռամսեայ	» 40
Փոքար երկիր տրկն	40 ծր.բ.

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ինչքան մեծ է և անհրաժեշտ՝ մեր ազգին կարօտ դըռնուած պիտոյքը, այնքան աչքաժուարին է այդ պիտոյքը հոգալու մասին ձեռքերնիս գըռնուած միջոցներն: Եւ եթէ մեր պիտոյքն երբեմն կ'ըլլայ ուրիշ, դորա պատճառը մասամբ իւրեք եթէ արտաքին դժկամակութիւնն եղած է, մեծ մասամբ ալ այդ պիտոյքը մեք մեզէն ճարելու կամ հոգալու մեր անբաւականութիւնը կամ անհագութիւնը եղած է:

Այս հղանակ ընթացքը այն պատիճան ընդհանրացած և տարածուած է մեր մէջ, որ գրեթէ ընդհանուր ունակութիւն և սովորոյթ դարձած է մեզ՝ ընդհանուրէն կամ կեղքնուկան մարմինէն սպասել՝ ինչ որ մասնաւորաց ջանիւքը յարելի է ձեռք բերել և շատ զիւրուութեամբ:

Երէկ տոթիւ մը կըսէինք թէ՛ քաղաքակիրթ և բարեկեաց այն ազգերն, որոց այժմու վիճակին վրայ կ'ախառն ձիւք, եթէ այսքան յառաջ գացեր են, առի ուրիշ կերպով չէ եղած՝ բայց եթէ այն պէտքը՝ զոր կեդրոնը չկ'ունար հոգալ մասնաւորը իրենք իրենց մէջ հոգալով, և առանց կեդրոնին վրայ ծանրանալու՝ իրենց ձեռքէն եկածը ուղղակի իրենք չենելով, իսկ դժբաղդաբար այս բանին օրինակները շատ քիչ կը տեսնուին մեր մէջ:

Օրինակի համար, կրթութիւնն ու դաստիարակութիւնը ոչ միայն այսօր՝ այլ և երկար տարիներէ ի վեր է որ մեր ազգին մէջ անհրաժեշտ հարկ և պէտք մը ճանչցուած է, այնպէս որ չկայ այսօր մէկը, ո՛ր կարգի ժողովրդէն ալ կուզէ ըլլայ, որ ստովանի թէ՛ կրթութիւնը

անհրաժեշտ պէտք մն է, բայց քանի՛ հոգի կրնանք գտնել որ այդ կրթութիւնը տալու կամ ստանալու համար իրապէս պէտք եղած ծախուցը մասնակցել յօժարի:

Ոմանք կատարկէն թէ՛ դըպրոցական կրթութիւնը կամ դաստիարակութիւնը ազգին մէջ ընդհանուր պէտքն ըլլալով, այսինքն բան մը՝ յորմէ անգին ընդհանուրութիւնը պիտի օղտի, հետևաբար դորա ծախքն ալ պէտք է ընդհանուրութիւնն ընել: Այսպէս խորհիւրդ կամ փաստաբանելը՝ աւելորդ է ըսել թէ՛ պարզապէս բառախաղութեան ելիւ է, զի ազգի մը ընդհանուրութիւնն ըսուած բանը չկայ՝ եթէ մասնաւորութիւններ չըլլան, և այդ շահող ընդհանրութիւնն ալ՝ դարձեալ այդ մասնաւորութիւններն են հաւաքական կերպիւ առնուած:

Ասկից զատ ազգի մը ընդհանրութիւնը ինչքան օգուտ որ պիտի տեսնէ դաստիարակեալ և կրթութիւն ստացող անհատ մը, անկէ աւելի կանուխ և աւելի ուղղակի օգուտ տեսնողը պիտի ըլլայ այն դաստիարակեալ տղին ծնողքը կամ մերձաւորքը տասնապատիկ աւելի դորա պէտքերն հոգալու պարտական պիտի ըլլան, բայց և այսօր հակառակ՝ կ'տեսնենք քարգանթիւ ծնողքներ, որք իրենց անձնական հաճոյիցը համար ունէ բան չ'իմայելով հանդերձ, իրենց զակին կրթութեանը համար շարժելը 2 կամ 3 դրչ տալու իսկ կ'ըլլանան կամ կ'դժկամակին, և այդ 2 կամ 3 դրչը վճարելու հարկէն ազատելու համար հողար ու մէկ պատըրուակներ կ'տեղծեն ու կ'հնա-

րեն, ինչու այս ամենը, որ պէտքի մասնաւորի մը զաւակը ընդհանուրութեան ծախսը կըրթուի և դաստիարակուի, մինչդեռ սորա առաջին օղուտը տեսնողն ու վայելողը՝ նոյն իսկ այդ զակին ծնողքն ինքը պիտի ըլլայ:

Նպատակնիս չէ քննել աստանոր թէ՛ ուստի՞ եկած կամ մտած է մեր ազգին մէջ այս զանցառութիւնը կամ դժկամակութիւնը, այլ օտ հաստատել կուզենք թէ՛ փոքր բացառութիւններն մէկզի աւանելով՝ մեր ազգին մէջ ոնէ՛ մեծ կամ փոքր օգուտ մը ձրիւրար վայելելու տեսնու ու միտուող կայ և կը յարատեւէ, չքսելու համար թէ՛ երթալով կընդհանրանայ:

Ասի խիստ ցաւալի երևոյթ մնէ, մինակ տնօր համար որ կ'ըր մասնաւորք ամեն շահու, ամեն օգտի, բարեօգման և դիւրակեցոյթեան ակնկալութիւնը կեդրոնին վրայ դնեն, ամեն բան անկէ սպասեն, իսկ իրենք ամեն բանի կամ ձեռնարկի մէջ կատարեալ ձեռնպահութիւն մը ցոյց տան, տարակոյս չկայ թէ բան մ'ալ բլլալիք չունի, և մեր փափաքներն ընդունան պիտի հինն, մասնաւորը ներկայ ժամանակս, յորում թէ ամեն բանի մասին մեծամեծ պէտքեր ունիմք լեցնելու և թէ մեծամեծ պարտականութիւններ կատարելու:

Մեր առաջին պէտքը տարակոյս չկայ թէ՛ այսօր գաւառաց բարենորոգումները պիտի ըլլան, որք պիտի հաստատուին տեղական պիտոյից քննութեամբ: Բն ու առնոց պահանջածին համեմատ: Ըսել է թէ տեղական պիտոյքը մինչև ո՛ր ստիճան ստուգութեամբ ու անաչառապէս քննուին, այնքան բաղձածուածին պիտի մտանայ հաստատուելիք բարենորոգումներն ալ, զի ասոնց կատարեալ կամ

գոհացուցիչ ըլլալը՝ կախումն ունի տեղական պիտոյից ճշգրտ և կատարեալ քննութենէն:

Հետեւաբար մեր առաջին հոգը պիտի ըլլայ ջանալ որ տեղական պիտոյից քննութիւններն ճշգրտ և կատարեալ ու գոհացուցիչ կերպիւ կատարուին, և Գուռն արդէն այդ մասին երկու լիազօր յանձնաժողովներ կարգած ըլլալով, մին ճանրայ ելաւ, միւսն ալ գրեթէ մօտ ատենէն պիտի մեկնի:

Գիտեմք ամենքնիս ալ թէ Ս. Պատրիարքը մինչև վերջը պնդած էր Բ. Գրան մօտ, որ այդ յանձնաժողովներն չըրկելով, կատարուելիք քննութիւններն ու հաստատուելիք բարենորոգումներն հոս Պօլսոյ մէջ եւրօպ. յանձնաժողովի մը ձեռքը ըլլան ու որոշուին, իսկ Ս. Պատրիարքին այս խնդիրքը բնաւ չը լուսեցաւ Բ. Գրանէն, սրով և Պատրիարքը հրաժարելու ըստիպուեցաւ:

Ասոր կրտսն բացասական (նէկաթիֆ) ընթացք, որ քննութիւնը դործելէ քաշուի կ'նշանակէ, մինչդեռ մեր ազգին այժմու վիճակը ընդհակառակը դործօն (աքթիֆ) ընթացք մը բռնել կ'պահանջէ, ամեն պարագայներէն ալ օգուտ քաղելու գործունէութեամբ, եթէ մեք մեզի նպատաւոր պայմաններ կամ պարագայներ ստեղծելու անկարող կ'գտնուիմք: Մեր ջանքը պէտք է լինի այժմ դործել, ինչ կերպիւ ալ որ կարելի ըլլայ, և ոչ թէ մեր խօսքը մտիկ չըլլուելուն համար սրբողի և անդործ նստիլ: Մեր ճարպիկութիւնը և հնարամտութիւնը հոն պէտք է ըլլայ, որ եթէ մէկ քսածնիս կամ պահանջումնիս չկրցինք լսել ընել, այդ նպատակին ուրիշ ճանրով մը հասնելու տշխատինք, բայց այսպէս ալ ընելու համար՝ դորք

Տեղ պէտք է և ոչ թէ գործէ քաշուի :

Կթուի թէ այս ճշմարտութեանը նոյն ինքն Ս. Պատրիարքըն ալ վերահասու լինելով, հակառակ իւր հրատարակած փոփոխութեանց լիազօր յանձնաժողովներէն մին ճանաչող ելնելուն պէս, ինքն ալ սորակատարելիք տեղական պիտոյից անաչառ ճշգրտութիւնը ապահովելու նպատակին ուրիշ միջոցաւ մը հասնելու, այն է՝ ասանցմէ անկախ՝ ազգին կողմէն ալ մասնաւոր քննիչներ հանել դատաւերը, տէրութեան յանձնաժողովոյ ընելիք քննութեանցն և տարածանցը վրայ ի մտայ հակելու և տրտարութիւնըն, իրաց փոփոխը և երկրին պէտքը իրապէս ի վեր հանելուն օղնելու :

Տարակիտ չկայ թէ այսպիսի ձեռնարկ մ'ալ նոր ծախուց կ'կարօտի. զի կեզրունը չունէր և չունի կարողութիւն նոյն իսկ իր սովորական պիտոյքն հոգայու ուր մնաց որ այսպիսի արտաքոյ կարգի ծախքերը կարենայ հոգայլ Ռուսի Ս. Պատրիարքը անցեալ կիրակի առաւօտ թերայ երեւելից ժողով մը գումարած էր, սոյն ծախուց ալ հանգանակութեան մէկ միջոցին վրայ խորհելու : Իմացածնուս ետ յիշով ներկայ գտնուողք ընդամենը 380 կամ 400 ոսկւոյ չափ գումար մը ստորագրելով, տակէ աւելի հանգանակութիւն մը չկարենայ գոյանալուն վրայ, առ այժմ ազգ. քննիչներ որոշելու և զրկելու գործն ալ ետ թողուլ հարկ է ելեր :

Ստուգիւ ազգին մէջ իրենց քարետիրութեանըն ու վեհանձնութեամբ հանրածանօթ կարգ մը անձինք կան, որոց միշտ դիմել սովորութիւն եղած է ամեն անգամ որ այսպիսի մեծ պէտք մը երևան կ'ելնէ, և որոնք ամեն անգամ ալ յօժարակամ մասնակցին, բայց վերջապէս այդ անձանց հարստութիւնն ալ անսպառ գանձ մը չկրնար ըլլալ : Հայկական խնդրոյ ձեռնարկին համար կ'զիմուէի՝ կ'տան, սա կամ նա ընկերութեան կամ բարեպաշտական հաստատութեան մը և կամ աղքատաց օգնութեան համար կ'զիմուի՝ կ'տան, Պատրիարքս. բանի արտաքոյ կարգի ծախուց համար, Հիւանդանոցին նպաստի մը համար կ'զիմուի՝ կ'տան, վերջապէս պարտաւոր չեն գործընդ. բայց սակայն միշտ և ամեն ժամանակ իրենք և գործեալ մինակ իրենք են տուողներ, զոնէ եթէ իրենց սոյն ձեռքընտուութեանը՝ ազգին միւս մասնաւորներն ալ աջակցելու

փոյթ կամ յօժարութիւն մ'ունենային, գործը մեծապէս դիւրացած կ'ըլար, բայց երբ ուրիշներն լոկ բարենորոգում կը գոչեն և նիւթական պիտոյից մասնակցելու ձեռնարկ կ'զբանունին կամ ետ կ'քաշուին, աւելորդ է ըսել թէ՝ ամեն բան այսպէս ապարդիւն և անյաջող վիճակի մէջ կ'մնայ, և մեր ամեն փոփոխներն ու իղձերն ալ այսպէս ցնդելով ընդունայն կ'ելնեն :

Եթէ մեր այս ժշատութիւնըն ու անհոգութիւնը այսպէս դեռ ընդ երկար պիտի տևէ, պէտք է գիտնանք թէ՝ ինչ բանի որ կ'ըրձամք, պարապ տեղը կ'ըրձամք, զի առանց նիւթապէս գործակցելի կամ մասնակցելի գիտնալու, սոսկ պշատնական փոփոխներ ու իղձեր սրտայայտելը ոչ օգուտ մ'ունի և ոչ նշանակութիւն :

Եթէ ասոր համար է կուղենք որ Պատրիարքն աշխատի և մենք ձրխարար վայելենք, կ'վստնամք մեծապէս որ այս սատիճան դիւրադնի ստացուած բարիքի մը յարգն ալ քստարժանայն չկարենանք գնահատել ու գիտնալ, և երբ բանի մը յարգը չզրկուիր, այդ բանը շատ չուտով ձեւքէ կ'ելնէ, ինչքան ալ անհուն զոհողութեամբ ձեւք բերուած ըլլայ այդ :

Ազգկանգը Ռ. կայսրը, իւր կենացը գէմ գործուած դաւաճանութեան փորձէն անջնաս ազատուելուն ի խնդակցութիւն յանուն Հայոց ազգին՝ Ն. Ս. Պատրիարքին հեռագրին ի պատասխանի, ինքն ալ իւր դեսպան Լօպանօֆ իշխանին հեռագիր մ'ուղղելով հրաման բերէ որ այս մասին իւր շնորհակալութիւնը յայտնէ Հայոց Պատրիարքին :

Լօպանօֆ իշխանն ալ իրատ սիրալիր և քաղաքավարական յատուկ գրութեամբ մը փութացեր է Չարին սոյն շնորհակալութիւնը հաղորդել Ս. Պատրիարքին :

Չատկի շնորհաւորութեան տալիս Ս. Պատրիարքին ներկայացող Արեւելեան կաթողիկոսը պատգամաւորութեան ընթերցած Ռ. զերձին օրինակն է հետեւեալը, զոր ուշադրութեան արժանի դատելով հարկ կ'համարեմք յառաջ բերել :

Սրբազան Տէր, Այսօրուան տօնիս տալիս կաթողիկոսայ Հայոց պատգամաւորութիւնը եկած է ասա Ս. Հորդ շնորհաւորութեամբ երկանկութիւն բարեմաղթել :

«Գիտէք արդէն թէ երբ մեր հակառակորդներն մեզ դէմ պատերազմ յուղեցին, փափաքէին և յուսային միանգամայն զմեզ անտէրուել և սրբ կացուցանել, բայց չտեսան և չիմացան ատենք թէ նոյն իսկ իրենք իրենց դիտաւորութեան հակառակ մղէին զմեզ աճապարհնօք մեր ճշմարիտ Հօրը զլրկը ուր հասնիլը շատանց ի վեր անձկացած նպատակինս էր : Հետեւարար կաթողիկոսայ Հայոց այս զգացմանց թարգման ներկայացած ժամանակինս, հրաւիրեմք միանգամայն ջերմ սրտիւ Ս. Հօրդ սուրբ օրհնութիւնը Հայ ազգիս այս մասին վրայ ալ, որուն մեծապէս պէտքը զգալի եղած է, մանաւանդ ներկայ պարագայիս մէջ :»

Ս. Պատրիարք Հօր վերջին հրատարման լուրը, ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և Սեփաստիա ալ հասնելուն, խիստ աղթուր և ցաւալի տագուորութիւն մ'ընելով, անմիջապէս գաւառական ազգ. ընդհ. ժողովոյ, Ռուսմն. Խորհրդոյ և Սենքերիմեան Ընկերութեան գիւանդներն մեկտեղելու և իրենք իրազիր ուղերձ մը պատրաստելով, մտաբարաղաքս զրկեր են զայն Ս. Պատրիարք Հօր մատուցանելու համար :

Մայրաքաղաքս գտնուող Սեփաստացի ազգայնոցմէ և Սենքերիմեան ընկերութեան գլխաւորներէն բողիկոսեալ պատգամաւորութիւն մ'ալ կիմանամք թէ երէկ Ս. Պատրիարքին ներկայանալով, յիշեալ Ռ. զերձըն. Սրբաղոթութեան մատուցեր է, որոյ մէկ պատճենըն ալ մեզ հաղորդուած լինելով, ի խնդրոյ Սեփաստացի ազգայնոց, կ'փութամք հրատարակել, որն որ Ս. Պատրիարքին վրայ իրենց ունեցած անհուն սէրն ու վստահութիւնը յայտնելէն զատ, ապացոյց մ'է նաև թէ Սեփաստիայ գաւառին ընդհանուր ժողովն ու Սենքերիմեան ընկերութիւնը, որոց միջև առեմէ մ'ի վեր է ցրտութիւն մ'ընկած էր, այս անգամ միանալով համակամ գործածելու սկսեր են :

Ահաւասիկ Ս. Պատրիարք Հօր ուղղեալ Ռ. զերձին պատճենը : Ամենպատիւ Սրբազան Հայր Բարձրաշնորհ Պատրիարք համայն թուրքիսնակ Հայոց ի կ. Պոլիս :

Հայր Հայրենեաց Մի այնպիսի ժամանակի մէջ, յորում աշխարհ կ'յիջափոխէր, թնդանօթի գոռումն ու զոչումն զաշխարհ կ'սարսափեցնէր, և վառօթի բոցն զթըռուաւ հայութիւն կ'ըրցակիզէր :

Նախախնամութիւնը զՉեր սրբազան հայրութիւն մի անտէրունջ ժողովուրդի հովիւ կարողեց և նորա կեանքն ու անտէր հայրենիքն ձեր նուիրական ու աշխարհաշէն ձեռքերուն յանձնեց :

Ազգասէր հայր, քաջ գիտէ հայ ժողովուրդն ձեր ազգասէր հայրութեան անզուգական արժանիքն և կ'յանդդիտ առեւ, որ Ս. զգ. բարերարաց կարգին մէջ, քան զանմահ նախորդս ձեր աշխարհաշէն Ներսէս, քարձր զիւրք մը կ'ընէք, զի ձեր երջանկայիշատակ նախորդներն ինչ կենդանութեան ատեն անմահացան, իսկ դուք մեռելութեան ատեն, քանզի առ ոչինչ գրեւով ձեր անձնական վատտուող ջուրիւնն, իբրև հայր գորովագութ, ազգիս գոյութիւնն աւրիարար պահպանելէն զատ, մի այնպիսի մեծապարծութիւն կատարեցիք, որով ձեր վեհ անունըն անմահացաւ, և որով բոլոր Հայ սրտերն երախտապիտուութեան կենդանի արձաններ հանդիտացան :

Այո՛, Սրբազան Տէր, մեծ էք և անմահ ձեր պաշտելի գործերովն, մանաւանդ քաղաքական աշխարհի աւելն անկեայ Հայուն քաղաքական կեանք տայովն, զի թէպէտ կար Հայրութիւն, բայց անուանական և եթէ դուք կենդանացուցիք զայն և իրականացուցիք :

Բայց, Սրբազան Տէր, Չեր նուիրական քրտամբ փրկեալ ժողովուրդն մինչդեռ մէկ կողմէն երախտապիտութեամբ լքեցեալ՝ ձեր պատուական կենաց վրայ կ'գործարայ, և զՉեր բարձր սրբաղոթութիւն պատրիարքական գահուն վրայ միշտ հաստատ տեսնել կ'բաղձայ, միւս կողմանէ ի սիրա կարեւոր խոցեալ հեղեղանման արցունքներ կ'թափէ Չեր հրաժեշտի ցաւալի լուրն յաճախակի լսելով :

Չի մի այնպիսի խնդիր է այդ, որ կայծակի նման ամբողջ Հայրութեան սրտերը կ'հարուստէ, Հայ ժողովուրդն աակալի շատ բաներ կ'յուսայ ի Չէնջ, և կերկնի կորուսանել ինչ որ Չիզմէ գտաւ :

Խնայեցէք, կողողչեմք պատանօք, մահամեծ կենաց գժբաղդ Հայրութեան, որ ձեռք և եթէ կ'պլլայ, կատարեցէք ինչ որ յլայք ու ծնայք :

Ներսէսներ մեծագործութեան համար կ'մինն ու կապրին, դուք ալ մեծ էք, այո՛, սրտով, զգացումով ու գործով խոնարհարար մատուցանելով մեր խորին մեծարանաց հետ սրգիական համբոյնիս, եմք միշտ անձնուէր դաւակը Չեր բարձր Սրբաղոթիտան :

(Ստորագրութիւնը Ղիւտանաց ընդհ. ժող. Ռուսումն. Խորհ. և Սենքերիմեան ընկ. Սեփաստ. 21 մարտ 79 տիոյ)

Կի... ջակայ... եղբայր... լով... զիմեր... ընդ... ծոցը... նին... Պոլսեցի... ալ, սր... դտնու... և հայ... որոշել... զիմեր... մարտի... մէջ է... ըստ սո... Յու... Չատկի... խաղա... կ'պատ... պատրի... Հե... րակու... Բան... Արմատ... քահան... և աւազ... գաղտն... հոգեւոր... րոց երկ... հօր զիր... անպատ... զի զիս... ներ յար... մեծ ցա... պատկէ... և ոչ սք... խրամա... այժմ... իւր ազ... տեց, և... ճառ ել... պատն... դամ ժո... առաջն... բայց ին... զգայուն... զգար... 79 ապրիլ... Ման... քորման... Վեր... տեսնե... կու խո... յուս սպ... իբրև թէ... իերայ... հան Ռոկ... վարժար... դունապ... ֆիլեհե... հոն է... անտակ... ուղղակի... նեակր... Էնկ... առի բ... նակնկա... թեանը... նապէս... քուստ... թիւնը կ... նէ իրենց... եկած են... Խոր... նեն թէ... կեանքը... մանալով... զակի պ...

Ամերիկայէն մայրաքաղաքս Գաքս Բերուած աղամ մեքուր...

ԱՂՂԻ

ԹԱՏՐՈՆ ՕՍՄԱՆԻԷ

ՊԵՏԻՍ ԲԱՇԱ

Վարչութիւն Յ. Էֆ.

Վարչութեան

1879 Ապրիլ 7 Երաթմ երեկոյ ժամ 2 1/2 Տիշդ

Ի ՆՊԱՍՏ

Ս. Ներսիսեան Աղգ. վարժաւորանէ նոր թաղի Սամաթիոյ բնդ...

ԱՐՅԵՒ ՍՈՒՐԶԱՆՊԱԿ

Թատերգութիւն ի 5 արարս և 2 պատկեր

Ա. երգ. Շիքո շիքո, Բ. Միշի միշի Գ. երգ Ա. յայ

Ճեմարան վարժարանի մանչ տղայոց նախակրթարանի հասարակարանի և դաստիարակ...

ԻՕԺԷՆ ՍԻԻ

ԴԻԻԱԲՆԱԿ ԲԼՈՒՐ

Թարգմանեաց

Ս. Ղալաբան

Պատմական Նրեոյի անուանի հեյր. կին խիտ հետաքրքր...

ԳՈՐԶ

ՄԱՆԿԱՐԷՊԵՍ ԶԻՔԱՅԱՅՍԻ Զեղեակութիւն

ՊԱՐՊԱՆ ՊԵՏԻ

Մէկ թերթին դիմն է 30 փարս մէծիտ...

ՇԱՐԳ

ՄԱՆԿԱՐԷՊԵՍ ԶԻՔԱՅԱՅՍԻ Զեղեակութիւն

ՊԱՏԿԵՐԱՋԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԻ

Կեդրոնատեղին է Պարտուհի Գաղղիական զրատուհը...

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՆՈՑ

ԱՂՂԱՅԻՆ ԳՊՐՈՑԱՅ ՀԱՄԱՐ Դրեց Հ. Գրեգոր Վ. Գաղղիական Միթ. Ուխտէն

Վիէննա Միթ. Տպարան 1879

Բովանդակութիւն. Միշին ու Նոր Պատմութիւնը մինչև մեր օրերը...

ՏՕԲԹԷՐ ՄԿՐՏԻՉ ԱԼԼԱՆԵԱՆ

Երկար տարիներէ ի վեր կուրծքի, սրտի և թոքախտի հիւանդութիւնները...

Այս առթիւ պատիւ ունի ծանուցանել Արդոյ հասարակութեան որ պատրաստ է մասնաւոր այցելութիւններ բնել...

ՇՇ. օրերը պիտի գանուի Մ. Իէյմանի իջի-գարուլը...

ՀԱՄԱՆՈՑ ԴԻՃԱՐԱՆԻԹԻՒՆ

Յօդուաց Գրեց Մարեան 82 էրեսէ բաղկացեալ և իւր տպարանին ի լոյս բնծարուած է...

Ղալաթիա ԵՇ. 5 Ապրիլ

ԸՆԴՀ. ՊԱՏՐՏ. ԱՐԺ.

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Բաց, Գոց, Բարձր դիմ, Ծած դիմ, Թղթադրամ բաց, Բարձր, ցած, Ժամը 11, Փոխ. 63ր, 65ր, 69ր, 73ր, Գանձատուս, Սօսիէթէ Ժէնէրալ, Սօսիէթէ Օթօման, Պանք ար Բօնաթ, Բրէտի Ժէնէրալ, Թրամիէյ, Ընդ. Երկաթուղի, Ընդ. 100, Անդղ. սոկի, Գաղղ., Բօլ, Բարպօն արծաթ, Թղթադրամ, Բրըմից, Հինգնոց, Մէթալիք, Ճերմակ մէծիտ, Պղինձ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ԺՕԶԷՑ ՊԱԼԱՍՄՕ

ԹԱՐԳԱՆԵՑ

ԿԱՐԱՊԵՏ ԷՍ. ԵԱԶՄԱՆԵԱՆ

Սէյմանը Տիւմա գաղղիացի մեծանուն միտասնին գրէն ելած սոյն գործին ծրք այն է վերին հասարակ և Եգիպտոսի հեղափոխութեան հարցը...

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ԺՕԶԷՑ ՊԱԼԱՍՄՕ

ԹԱՐԳԱՆԵՑ

ԿԱՐԱՊԵՏ ԷՍ. ԵԱԶՄԱՆԵԱՆ

Սէյմանը Տիւմա գաղղիացի մեծանուն միտասնին գրէն ելած սոյն գործին ծրք այն է վերին հասարակ և Եգիպտոսի հեղափոխութեան հարցը...

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ԺՕԶԷՑ ՊԱԼԱՍՄՕ

ԹԱՐԳԱՆԵՑ

ԿԱՐԱՊԵՏ ԷՍ. ԵԱԶՄԱՆԵԱՆ

Սէյմանը Տիւմա գաղղիացի մեծանուն միտասնին գրէն ելած սոյն գործին ծրք այն է վերին հասարակ և Եգիպտոսի հեղափոխութեան հարցը...

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ ԹՕՐԵՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԱՆ

Կը ծախուի Եէնի ճամբի Չիլի-կիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրութեան ապ ծով:

Գին 1 Ծրանք

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱՋԱՆ

ԳՏԵՈՒԱՅ ՈՒ

ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի դեղը բոլորովին բուսեղէններէ բաղադրուած ըլլալով...

Ամեն տեսակ քոլի, Բատմոք-սի, մէջքի կամ մղիքներու ցաւեր, ու նաև Թանք, Բօլքրա և այլ ա...

Կոչուած ցաւի դեղը բոլորովին բուսեղէններէ բաղադրուած ըլլալով...

Ամեն տեսակ քոլի, Բատմոք-սի, մէջքի կամ մղիքներու ցաւեր, ու նաև Թանք, Բօլքրա և այլ ա...

Ամեն տեսակ քոլի, Բատմոք-սի, մէջքի կամ մղիքներու ցաւեր, ու նաև Թանք, Բօլքրա և այլ ա...

Ամեն տեսակ քոլի, Բատմոք-սի, մէջքի կամ մղիքներու ցաւեր, ու նաև Թանք, Բօլքրա և այլ ա...

Ամեն տեսակ քոլի, Բատմոք-սի, մէջքի կամ մղիքներու ցաւեր, ու նաև Թանք, Բօլքրա և այլ ա...

Ամեն տեսակ քոլի, Բատմոք-սի, մէջքի կամ մղիքներու ցաւեր, ու նաև Թանք, Բօլքրա և այլ ա...

Ամեն տեսակ քոլի, Բատմոք-սի, մէջքի կամ մղիքներու ցաւեր, ու նաև Թանք, Բօլքրա և այլ ա...

Ամեն տեսակ քոլի, Բատմոք-սի, մէջքի կամ մղիքներու ցաւեր, ու նաև Թանք, Բօլքրա և այլ ա...

Ամեն տեսակ քոլի, Բատմոք-սի, մէջքի կամ մղիքներու ցաւեր, ու նաև Թանք, Բօլքրա և այլ ա...

Ամեն տեսակ քոլի, Բատմոք-սի, մէջքի կամ մղիքներու ցաւեր, ու նաև Թանք, Բօլքրա և այլ ա...